

ՎԱՋԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՆՈՐ ԲԱՌԵՐ ՀԱԿՈՒ ՇԱՄԱԽԵՑՈՒ
«ՀԱՅ ՆԵՂԵԼՈՑ» ԳԻՐՔՈՒՄ

Հակոբ Կաթողիկոս Շամախեցին ժԸ. դարի II կեսի հայ եկեղեցական և մշակութային կյանքի երևելի դեմքերից է: Նա ոչ միայն կազմել է Ս. Էջմիածնի արտոնությունների և իրավասությունների վերաբերյալ վավերագրերի ցուցակը, այլև հեղինակ է տաղերի («Բանաստեղծությունների»): Սակայն նրա առավել հայտնի գործը «Գիրք, որ կոչի Հաց նեղելոց» երկն է (Կ. Պոլիս, 1760)¹:

Այդ երկն ունի հետաքրքիր կառուցվածք. 1. Առաջին գիրք՝ ա. Ա. հատոր՝ բաղկացած Ա.-ԻԳ. գլխից, գրված հանգավոր շարադրանքով (էջ 43-276), բ. Բ. հատոր՝ կազմված ԻԴ.-ԻԷ. գլուխներից, ունի մեկ-երկու «մաղթանք, ստգտանք, տաղ և այլն» (էջ 277-340), 2. Երկրորդ «գիրք, որ կոչի Գոհարան», պարունակում է Լ. գլուխ (էջ 341-497), 3. «Աղերս յիշատակի գծագրողացն գրքոյ» (էջ 498-499), 4. «Յիշատակարան տպեցման», որում նշվում է, որ այն գրվել և ավարտվել է 1758 թ. (էջ 500-504), 5. աղոթք՝ «ի սուրբ Նարեկ գրքոյն» (էջ 504-512)²:

Գիրքը գրված է ժամանակի գրաբարով, գերծ չէ լատինաբան հայերենին բնորոշ (արհեստական) բառային և քերականական ձևերի գործածությունից. հմնտ. *Բազմագունեղ* «ամենաշատ», *բառնիլ* «վերացվել», *անարգիցէին* «անարգելին», *եթէ ոչ իցէիր* «եթե չլինեիր», *թողանցայ* «թողնվեցի», *ի ներ բանտից* «բանտերի մեջ՝ բանտերում», *լնանեցես* «լցված», *մեծագունեղ* «ամենամեծ», *մեծագունեղապէս* «ամենամեծ ձևով», *յայնմ*

¹ Տե՛ս «Գիրք աղօթից, որ կոչի Հաց նեղելոց, շարադրեցեալ ի Յակոբայ արհիեպիսկոպոսէ Շամախեցոյ ի փառս մեծին Աստուծոյ քաջին մեղաւորաց, ի փրկութիւն նեղասկիւր մարմնոյ, ի կալանաւորութեան իւրում ի ՌԶԳԷ. թուականիս հայոց (=1748), և տպեցեալ յամի Տեառն 1760, և հայոց 1209 (7. VIII)», ի տպարանի Աստուածատուրի, ի Կ. Պոլիս (512 էջ):

² Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող գրքի վերջում՝ ձեռագիր, նշվում է, որ հեղինակ Հ. Շամախեցին «ի ՌՄԺԲ. (=1763), մարտի ԻԱ.-ին, յաւուր մեծի ուրբաթուն... փոխեցաւ առ Քրիստոս յոյսն ամենեցուն»:

կենին «այն կյանքում», *յիմումն կենի* «իմ այս կյանքում», *ներ այսմ ախտին* «այն ախտի մեջ», *ներ այսմ «սրանում»*, *նոյնոյ «նույնի»*, *շարադրեցեալ «շարադրված»*, *լնանեցեալ «լցված»*, *ի քէն թողանեցայ «քեզանից թողնվեցի՝ ազատ արձակվեցի»*, *յայսմ գրքոջ «այս գրքում»* եւ այլն³:

Սրանք արհեստական կազմություններ են՝ ստեղծված լատինաբան հեղինակների կողմից՝ հայերենի բառապաշարը, մանավանդ քերականական կառուցվածքը լատիներենի օրինակով «լրացնելու» նպատակով, որոնք եւ ինքնաբերաբար թափանցել են նաեւ բուն հայերենով գրված երկերի մեջ, նույնիսկ ժամանակի էջմիածնական գրական միջավայրում⁴:

Առանձնացվող բառերը պայմանականորեն նոր են կամ նոր իմաստով կիրառված: Նկատենք, որ հայերեն ձեռագիր աղբյուրներն այսօր եւս ոչ լիովին, կարելի է ասել մասամբ են ուսումնասիրված, մանավանդ հայերենի բառապաշարի պատմության տեսանկյունից: Ուստի պատահական չէ, որ հատկապես վերջին ժամանակներում կատարվում են բառագիտական տարբեր ուսումնասիրություններ՝ փորձելով ավելի ամբողջական դարձնել այդ քնագավառը:

Ստորեւ սեղմ անդրադառնում ենք գրական այս հուշարձանի մեջ տեղ գտած բառերին՝ մանրամասն քննությունը թողնելով ապագային: Դրանք չենք գտնում գրաբարի հայտնի, ծավալուն բառարաններում՝ լույս տեսած թե՛ վաղ անցյալում եւ թե՛ մեր ժամանակներում⁵:

Առանձնացնում ենք վեց տասնյակից ավելի նոր բառեր, մեկ-երկու բառի նոր իմաստային կիրառություն՝ ի համեմատություն «Նոր հայկազեան» եւ մյուս բառարանների:

³ Այս մասին մանրամասն տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը XVIII դարում. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1982, 2, էջ 63-72. նույնի՝ «Լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշները». «Պատմա-բանասիրական հանդես», 2008, 1, էջ 159-179. «Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.)», Երևան, 2010:

⁴ Նման արհեստական ձևեր գործածվում են նաեւ, օրինակ, Սիմեոն Երեւանցու «Ջամբո», «Քարոզգիրք» (ձեռագիր) գործերում. մանրամասն տե՛ս Սիմեոն Կաթողիկոս Երեւանցի, Ջամբո, թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ Վ. Համբարձումյան, պատմաաշխարհագրական ծանոթագրությունները եւ քարտեզները՝ Գ. Բաղայան, Երևան, 2003. Վ. Համբարձումյան, Սիմեոն Կաթողիկոս Երեւանցու «Ջամբո» երկի բառապաշարը. «Էջմիածին» (ամսագիր), 2006, 5 (մայիս), էջ 42-54:

⁵ Տե՛ս Գ. Աւետիքեան, Խ. Սիրումէկեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. 1-2, Վենետիկ, 1836-1837 (այսուհետեւ՝ ՆՀԲ). Մ. Աւգերեան, Առձեռն բառարան հայկազեան լեզուի, 2-րդ տպագր., Վենետիկ, 1865 (այսուհետեւ՝ ԱԲ). Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան, Անթիլիաս, 2004 (այսուհետեւ՝ ԳԲ):

1. Նոր բառերն ըստ խոսքիմասային պատկանելության մի քանի տեսակ են՝ գոյականական, ածականական, մակբայական: Ընդ որում, համեմատաբար շատ են ածականական կազմությունները:

ա. Գոյականական կազմություններ. Դրանք սովորաբար բարդ ածանցավոր բառեր են, որոնց բաղադրության, այսպես կոչված, «վերջին քայլը» ածանցումն է (հմմտ. *բուսաբերություն*), երբեմն՝ ածանցավորի բարդում (հմմտ. *հանգստաշուր*), այլև՝ ածանցում (հմմտ. *նախագրիչ*):

Բուսաբերություն, գոյ. «բույսերի աճի հնարավորություն, բուսաբեր լիները՝ բուսնելը»։ Տնօր օդոց զբարեխառնություն, //Նաեւ անձրեւաց քաղցրություն, //անդոց *գրուսաբերություն* (ՇՀՆ, էջ 223): ՆՀԲ-ն, ԱԲ-ն, ԳԲ-ն չունեն, թեև ունեն *բուսաբեր*:

Դիրամնրածություն, գոյ. «հեշտ ըմբռնելի՝ հասկանալի»։ Զոմանս բանս ոտնաչափութեամբ շարադրեցաք վասն փութասերտութեանց եւ *դիրամնրածութեանց* (ՇՀՆ, էջ 28): ՆՀԲ-ն չունի, ունի *դիրամնրություն*:

Խրատապարծություն, գոյ. «պատժելով խրատելը. պատիժն իբրեւ խրատ գործադրելը»։ Եւ ի պատուիրանս իւր ածել ի ձեռն *խրատապարծութեանց* (ՇՀՆ, էջ 6). Վասն որոյ զսաստիկ սովն ետ սմա ի *խրատապարծություն* եւ ի մարմնանեղություն (ՇՀՆ, էջ 8). Բայց գիտելի է, զի որք զայսպիսի *խրատապարծությունս* եւ մարմնանեղությունս սիրով ընդունին (ՇՀՆ, էջ 9). Ետ ինձ *գխրատապարծություն* եւ զմարմնանեղություն (ՇՀՆ, էջ 11). Եւ զի վասն մեղաց նեղաւորն աղօթօղ՝ *խրատապարծութեամբն* եւ մարմնանեղութեամբն (ՇՀՆ, էջ 24-25). Ըստ որոց եւ այժմ՝ արկեր զիս զպարտաւորս յայս *խրատապարծությունս* (ՇՀՆ, էջ 305). Զի վասն մեղաց իմոց արկեր զիս ի յայս *խրատապարծությունս* (ՇՀՆ, էջ 28). Իսկ եւ ի *խրատապարծութեանս*՝ յորում կայի յուսահատեալ ի հոգեկան եւ ի մարմնական մխիթարչաց՝ զրկեցեալ ի հասարակածագ լուսոյ արեգականն եւ ճրագի՝ մերկացեալ ի բնաւից ընչից (ՇՀՆ, էջ 488):

Համբերողական, գոյ. (ած.) «Հոր՝ մեծ համբերող»։ Յորմէ ուրեմն յայտ է, զի ճշմարիտ է բանն *համբերողականին* Յոբայ (ՇՀՆ, էջ 4).

Հանգստաշուր, գոյ. «հանգստություն բերող՝ ոռոգող, հագեցնող շուր»։ Ընդ խոտաւէտ դալար վայրին //պահել ի պատուիրանս քոյին, // եւ ընդ *հանգստաշուր* մարգին //սնուցանել յաւետարանին (ՇՀՆ, էջ 155):

Մարմնանեղություն, գոյ. «մարմնին նեղություն պատճառելը՝ տալը, զրկանք կրելը»։ Վասն որոյ զսաստիկ սովն ետ սմա ի խրատապարծություն եւ ի *մարմնանեղություն* (ՇՀՆ, էջ 8). Բայց գիտելի է, զի որք զայս-

պիսի խրատապատժությունս եւ *մարմնանեղությունս* սիրով ընդունին (ՇՀՆ, էջ 9). Ետ ինձ զխրատապատժություն եւ *զմարմնանեղություն* (ՇՀՆ, էջ 11). Եւ զի վասն մեղաց նեղաւորն աղօթօղ՝ խրատապատժութեամբն եւ *մարմնանեղութեամբն* (ՇՀՆ, էջ 24-25):

Նախագրիչ, գոյ. «բառի սկզբնատառի գրողը՝ տառագրիչ»։ Արդ աղա-
չեմք յիշել վերջաբար. //գերկոսին եղբարս՝ գնօտարս անկատար. //գերե-
միաս եւ գ՛լունկիանոսս //զնախագրիչս տառիս փրկարար (ՇՀՆ, էջ 498)⁶։
ՆՀԲ-ն չունի, թեւ ունի *նախագիր*, ԳԲ-ն չունի։

Նեղասկրություն, գոյ. «նեղություն կրելը»։ Ընկա՛լ, Տէ՛ր, ի քոյս գթու-
թիւնս. //եւ վասն իմ մեղաց գտրտմութիւնս. //գարտասուս եւ զհեխութիւնս
//եւ զամենայն *նեղասկրությունս* (ՇՀՆ, էջ 200):

Որնաչափություն, գոյ. «Ուտանալոր՝ չափածո (երկ)»։ Զոմանս
բանս *որնաչափութեամբ* շարադրեցաք վասն փութասերտութեանց եւ
դիւրամտածութեանց (ՇՀՆ, էջ 28)։ ՆՀԲ-ն չունի, թեւ ունի *որնաչափ*
(«ոտքի չափ՝ բնական կամ երկրաչափական» իմաստով)։

Վարձագրկություն, գոյ. «վարձից՝ վարձատրությունից գրկվելը՝ ան-
մասն մնալը»։ Այլեւ յետ *վարձագրկութեանց*, //զսաստիկ պատիժս եւս
կրեսցես (ՇՀՆ, էջ 51)։

Վերջաբանություն, գոյ. «վերջաբան. ավարտ»։ Յիշատակարան հեղի-
նակին եւ *վերջաբանություն* բոլորի գրոյս (ՇՀՆ, էջ 487)։

Փութասերտություն, գոյ. «շուտ՝ անմիջապէս հասկանալը՝ սերտելը»։
Զոմանս բանս ոտնաչափութեամբ շարադրեցաք վասն *փութասերտու-
թեանց* եւ դիւրամտածութեանց (ՇՀՆ, էջ 28)։

բ. Ածականական կազմություններ. Սրանք, ինչպէս ընդունված է
ասել, հիմնականում ածանցական կազմություններ են՝ վերջին հաշվով
արտահայտելու առարկայի, երեւոյթի հատկանիշ, կան նաեւ բարդ բա-
ռեր, որոնց բաղադրիչներից մեկնումեկը բայարմատ է կամ այլ կարգի
միավոր։ Ընդ որում, լինում է պարզ կամ բարդ բառի ածանցում (հմմտ.
նեղաւոր, *սպերկմիտ*, *գոհատրական*), բարդում որեւէ բառով կամ բայար-
մատով (հմմտ. *երախարարես*, *թոյնատիպ*), բարդ ածանցավորի ածան-
ցում (հմմտ. *անուրնաչափական*) եւ այլն։

⁶ Բնագրում *Երեմիաս*, *Ղունկիանոսս*, *նախագրիչ* բառերը հայցական հոլովի գ-ից առաջ
ունեն լավով ը ձայնավորը (ըգԵրեմիաս եւ ըգՂունկիանոսս ըզնախագրիչս), որն անտեսում
ենք։

Ամենաքարելի, ած. «բոլոր բարիքներով լեցուն»։ Համակապեալ կազմեցի զգիրք մի եւ արկի յամենաքարելի գանձարանն քո յԵկեղեցի սուրբ (ՇՀՆ, էջ 490)։

Ամենաքժշկապետ, ած. «ամենաքժշկ. Հիսուս փրկիչ»։ Զի այս է նշան մեծագունի սիրոյ, եւ գործ բազմագունեղի ողորմութեան *ամենաքժշկապետին* Աստուծոյ (ՇՀՆ, էջ 10)։ ՆՀԲ-ն չունի, թեւեւ ունի *ամենաքժշկ*։

Այլափոփ, ած. «մեկ այլ բանի մեջ ամփոփված»։ Հեռացո՛ւ ի թիւր եւ ի նորաթեւ եւ *յայլափոփ* աղանդից եւ դաւանութենաց (ՇՀՆ, էջ 491)։

Անուրանաւոր, ած. «ոչ չափածո՝ արձակ (գրվածք)»։ Յորում բանք աղօթականք *անուրանաւորք* եւ անչափականք՝ յօրինեցեալք աշխատասիրութեամբ ի նոյնոյ Յակոբայ արքի եպիսկոպոսի Շամախեցոյ (ՇՀՆ, էջ 277)։

Անուրնաչափական (բանք), ած. «արձակ՝ ոչ չափածո (գրվածք)»։ Երբորդ՝ թէ բանի գիրք են բոլոր գիրքն, եւ բանի հատորի՝ ոտնաչափականք են բանին եւ թէ *անուրնաչափականք* (ՇՆՀ, էջ 2-3)։ ՆՀԲ-ն չունի, չունի նաեւ *անուրնաչափ*։

Ապականամերձ, ած. «աղավաղմանը՝ ապականմանը մոտ՝ մերձ»։ Խնամես անխնամ զմարմինս նոցա, նորոգես *ապականամերձ* հոգիս *նոցա* (ՇՀՆ, էջ 303)։

Ապերկմիւր, ած. «մեկ մտքի, ոչ տարակուսական, միահաղոյն»։ Բայց յուսամ ահա *ապերկմիւր*։ //եւ հաւատամ եւ ճշմարիտ (ՇՀՆ, էջ 147)։ Զերկուդ անձամբք եւ բնութեամբ զմիդ, //բոլորասիրտ եւ *ապերկմիւր* (ՇՀՆ, էջ 227)։

Արարածասէր, ած. «Աստված. իր ստեղծածին սիրող»։ Քանզի դու եւ Հայր որդեգրած, Արարիչ արարածասէր (ՇՀՆ, էջ 330)։

Արարչավայելուչ, ած. (գոյ.) «Արարչին՝ ստեղծողին վայել՝ պատշաճող»։ Ճաշակեցի՝ զի աստուածաբար զայլս ամենայն զաստուածայինս եւ *զարարչավայելուչս* ունիցիմ (ՇՀՆ, էջ 320)։

Արմարադաւոն, ած. «արմատը դառը. ոչ պիտանի»։ Սակայն եւ *արմարադաւոնս* եւ ի չարիս ուսեալս եւ բարեմտոացս՝ կրկին նշկահեալ ի բերեար Հօրէդ իմմէ (ՇՀՆ, էջ 281)։

Բոլորասիրտ, ած. «լիասիրտ. մեծապես նվիրված»։ Զերկուդ անձամբք եւ բնութեամբ զմիդ, //բոլորասիրտ եւ ապերկմիտ (ՇՀՆ, էջ 227)։

Գլխակոր, ած. «գլխահակ, գլխիկոր»։ Դարձո՛ւ յետս պատկառեալ եւ *գլխակոր*՝ որչափ յառնեն ի վերայ սորա (ՇՀՆ, էջ 493)։ Բառը, ի դեպ, գտնում ենք նաեւ Սիմեոն Երեւանցոյ ձեռագիր «Քարոզգրքում» գործածված. «Սակայն տօն համբարձմանն Քրիստոսի քան զամենայն արար զնա

գլխակոր եւ ամօթալից»։ «Այնքան վերանորոգին կսկիծն, որովք յաղթահարեցեալ *գլխակոր եղև*»⁷։ ՆՀԲ-ն չունի, ԱԲ-ն եւս չունի *գլխակոր*, թեւեւ ունի *գլխակորիմ*՝ «գլուխը՝ երեսը վար կախել ամոթով», չունի *գլխիկոր*։ ԳԲ-ն չունի, թեւեւ ունի *գլխակորեղ*՝ «գլուխը կախել՝ հակել. ամոթահար լինել»։ «Հայերէն արմատական բառարանը» ունի *գլխիկոր*՝ «գլուխը կախ՝ կորացած»՝ իբրեւ նոր բառ⁸։ Մալխասայանցը, սակայն, նշում է հենց *գլխակոր*՝ «գլուխը կորացրած՝ քաշ արած, տխրությունից կամ ամոթից. գլխակախ», որը, անշուշտ, հետագայի է⁹։

Գոհատրական, ամ. «գոհություն տվող՝ տված»։ Գիրք երկրորդ որ կոչի Գոհարան, յորում գոն բանք գոհատրականք եւ շնորհակալականք... շարադրեցեալք ի նոյնոյ Յակոբայ շնորհափայլ վարդապետ եւ յարհոյ եպիսկոպոսէ Շամախեցոյ» (ՇՀՆ, էջ 348)։

Դիրախաբելի, ամ. «ենթակա հեշտ խաբելու. դյուրահավատ»։ Քանզի մարդս բնութեամբ *դիրախաբելի* գոլ գիտենք իսկ յաստուածային բանից (ՇՀՆ, էջ 3)։ ՆՀԲ-ն չունի, թեւեւ ունի *դիրախաբ*, *դիրախաբող*։ ԱԲ-ն չունի, թեւեւ ունի *դիրախաբ*, *դիրախաբ լինիմ*՝ «արագափորձություն ունենալ»։

Դրախարասարաս, ամ. «դրախտ հիշեցնող, դրախտի նմանվող. դրախտակերպ»։ Ի *դրախարասարաս* բարեկեաց գթութեանց Հօրդ իմով արտաքսեալ՝ գնացի յաշխարհն մոլութեանց եւ չարեաց (ՇՀՆ, էջ 282)։

Եռասասանաարիպ, ամ. «եռակի երասան՝ առասան ունեցած ձեռով, երեք կողմից սանձված ձեռով»։ Եւ ծանեայ, զի մատնիլոց եւմ նեղութեանց, յորոց եւ փրկելոց եւմ *եռասասանաարիպ* երից անձանց Սրբոյ Երրորդութեանն ողորմութեամբ, եւ նաւապետասարաս միոյ աստուածութեան խնամօք առ իս գալստեամբն (ՇՀՆ, էջ 22)։

Երախարարես, ամ. «երախտիք իմացող, երախտագետ»։ Եւ ամենայն բարերնկալ եւ *երախարարես* եւ հացաճաշակ պարտի գոհանալ զբարերարէն (ՇՀՆ, էջ 25)։

Երիբովասարաս, ամ. «Երիբովի պես՝ նման, Երիբովը հիշեցնող»։ Ի յեկանելն իրում յերուսաղէմաքատակ Ադինայ անտի եւ ի յիջանելն *յերիբովասարաս* յաշխարս (ՇՀՆ, էջ 290)։

Երուսաղէմաքարակ, ամ. «Երուսաղէմի պես՝ նման. Երուսաղէմը հիշեցնող»։ Ի յեկանելն իրում *յերուսաղէմաքարակ* Ադինայ անտի եւ ի յիջանելն յերիբովասարաս յաշխարս (ՇՀՆ, էջ 290)։

⁷ Սիմէոն Երեւանցի, Քարոզք. Մաշտոցյան Մատենադարան, Ձեռ. 5898 (1779 թ., Հրեշտակապետաց վանք), էջ 1, 560։

⁸ Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հտ. 1, Երեւան, 1971, էջ 565։

⁹ Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հտ. 1, Երեւան, 1944, էջ 444։

Թոյնապիւս, ած. «թոյնի նմանվող, թոյնի դեր կատարող»։ Այսպէս խառնեաց զինքն ընդ օձին, // *զթոյնապիւս* պատրանս ընդ բանին (ՇՀՆ, էջ 60)։

Լուսատրչակրօն, ած. «Ս. Գրիգոր Լուսավորչի կրօնին՝ դավանանքին պատկանող. հայ քրիստոնյա»։ Ողորմեա՛, Տէր իմ, ազգիս իմոյ հայագնոյ եւ *լուսատրչակրօնի* (ՇՀՆ, էջ 491)։ Բերկրեցեալ իրաձին եւ կաթնասուն մանկամբբ *լուսատրչակրօն* հաւատացելովք (ՇՀՆ, էջ 493)։ ՆՀԲ-ն չունի, թեւեւ ունի *լուսատրիչ*։

Լուսատրչահիւմն, ած. «Ս. Գրիգոր Լուսավորչի հիւմնած. հայկական»։ Յիշեսցի՛ք եւ զերկոսին համապատիւ եւ համաջան՝ զաստուածուայց եւ զաստուածաբան վարդապետսն՝ զհարազատ որդիսն սրբոյ *լուսատրչահիւմն* Աթոռոյն հայկականի (ՇՀՆ, էջ 503)։ ՆՀԲ-ն չունի, թեւեւ ունի *լուսատրիչ*։

Խորհրդաձին, ած. «իմաստալից, խորհուրդ ունեցող. միտք առաջ բերող»։ Զի առաջին հատոր սորին՝ յորում են բանք ոտանաւորք՝ որք են տունք չորեքումբք տաղիւք՝ մէկ հազար եւ երեք. որք *խորհրդաձին* յամենակալ միութիւնն Աստուծոյ եւ յերիս անձինս նոյնոյ (ՇՀՆ, էջ 23)։

Խրատրապարծական, ած. «պատժելով խրատ(վ)ած»։ Եւ ի *խրատրապարծական* նեղութիւնս անկանիցին (ՇՀՆ, էջ 16)։ Այս փորձութիւն եւ նեղութիւն *խրատրապարծական* ընդ սովոյ սաստկագունի (ՇՀՆ, էջ 283)։ Եւ յայն սակս՝ անկայ ի փորձութիւնս եւ ի նեղութիւնս *խրատրապարծական* (ՇՀՆ, էջ 329)։

Ծառայախնամ, ած. «իր իսկ ստեղծածին՝ իր ծառային խնամող. Աստված»։ Քանզի դու ես Հայր որդեգթած, Արարիչ արարածաւեր... եւ Տէր *ծառայախնամ* եւ բարերար (ՇՀՆ, էջ 320)։

Կամայագործ, ած. «իր իսկ կամքով գործված. կամովի եղած» (իրբեւ հականիշ *ակամայագործ*-ի)։ տնս *ակամայագործ* (ՇՀՆ, էջ 307)։

Հասարակածագ (լոյս), ած. «ընդհանուր, ամենատարած»։ Զրկեցեալ ի *հասարակածագ* լուսոյ արեգականն եւ ճրագիւ մերկացեալ ի բնաւից ընչից (ՇՀՆ, էջ 488)։

Հացաճաշակ, ած. (գոյ.) «հացակեր, մահկանացու (անձ)»։ Եւ զամենայն բարերնկալ եւ երախտատես եւ *հացաճաշակ* պարտի գոհանալ զբարերարէն (ՇՀՆ, էջ 25)։

Հրեշտակաւարք, ած. (գոյ.) «հրեշտակի վարք՝ պահվածք ունեցող (անձ)»։ Եւ այլք ճգնաւորք՝ *հրեշտակաւարք*, որք Տեառն ձերոյ՝ եղէք կամարարք (ՇՀՆ, էջ 217)։

Մարմնագործ, ան. «անմարմին. մարմնականին չհետևող». Նպաստութեամբ սուրբ մաղթանաց, //սիրարորբոք մարտիրոսաց, //մարմնագործ ճգնաւորաց, //արիացելոց կուսանաց (ՇՀՆ, էջ 213):

Մեղսաթող (Հայր), ան. «մեղքերին թողություն տվող. Աստված». Զի քեզ Որդւոյդ ողորմածի, //Եւ սուրբ Հօր քոյ *մեղսաթողի*, //Եւ Հոգւոյդ կեցուցանողի (ՇՀՆ, էջ 214):

Մեղսապետ, ան. (գոյ.) «ամենամեծ մեղավոր՝ չարագործ (սատանայ)». Պարտի նա նախ հրաժարիլ *ի մեղսապետէն* սատանայէ (ՇՀՆ, էջ 18):

Նաաապետասարաս, ան. «նավապետի նման՝ պետ». Եւ ծանեայ, զի մատնիլոց եմ նեղութեանց, յորոց եւ փրկելոց եմ եռառասանատիպ երից անձանց Սրբոյ Երրորդութեանն ողորմութեամբ, եւ *նաաապետասարաս* միոյ աստուածութեան խնամօք առ իս գալստեամբն (ՇՀՆ, էջ 22): ՆՀԲ-ն չունի, թեւ ունի *նաաապետ*:

Նեղատր (*մեղատր*-ի համահնչությամբ), ան. (գոյ.) «նեղության ենթակա, նեղված», «նեղություն կրած՝ կրող (անձ)». Զի այս է հնար եւ դեղ բժշկութեան եւ փրկութեան մեղատր եւ *նեղատր* մարդկանց ի մեղաց իրեանց եւ ի նեղութեանց (ՇՀՆ, էջ 12). Նախ՝ զի նմին իրի անուանեցի զսա ի գործոյն *Հաց նեղատրաց*, զի զհոգւոյ զքաղցն լնու, եւ զմարմնոյ զբժշկութիւն եւ զկեցութիւն շնորհէ՝ հավատով, յուսով եւ սիրով ճաշակողացն (ՇՀՆ, էջ 13). Ուրեմն ըստ պատշաճին եղաւ անունն *Հաց նեղատրաց*, զի *նեղատրք* որպէս հիւանդք (անդ): ՆՀԲ-ն չունի: Մեղատր *նեղատրն* աղօթող ի սկզբան աղօթիցն՝ պարտի զերեսն իւր դարձուցանել ի յարեւմուտս եւ հրաժարիլ ի սատանայէ երիցս անգամ ասելով... (ՇՀՆ, էջ 39):

Շնորհակալական, ան. «շնորհներով լի, շնորհատու». Գիրք երկրորդ, որ կոչի Գոհարան, յորում գոն բանք գոհատրականք եւ *շնորհակալականք...*» (ՇՀՆ, էջ 348): ՆՀԲ-ն չունի, թեւ ունի *շնորհակալ*: ԱԲ-ն չունի, թեւ ունի *շնորհակալ, շնորհակալիմ, շնորհակալիք* եւ այլն:

Շնորհափայլ, ան. «շնորհաշատ՝ փայլուն». Շարադրեցեալք ի նոյնոյ Յակոբայ *շնորհափայլ* վարդապետէ...» (ՇՀՆ, էջ 348):

Ուրնաչափականք (բանք), գոյ. «չափածո՝ ոչ արձակ (գրվածք)». Երրորդ՝ թէ բանի՞ գիրք են բոլոր գիրքն, եւ բանի՞ հատորի՝ *ուրնաչափականք* են բանին եւ թէ անտոնաչափականք (ՇՀՆ, էջ 2-3):

Որդեգթած, ան. «որդեսեր, որդուն գթացող». Քանզի դու եւ *որդեգթած...* (ՇՀՆ, էջ 330):

Պատրժամնայրն, ամ. «պատժի մատնված». Իսկ այս մերս՝ ի յաղքատ եւ յանիմաստ մտաց, ի բանտարգել եւ ի *պատրժամնայրն* յանձնէ եւ ամենակուսէ անօժանդակ վայրոջ արարան բազմօք աշխատանօք (ՇՀՆ, էջ 29-30):

Պատրոդայկեր, ամ. (գոյ.) «մեծ խաբերա, ստահող (չարագործ՝ սատանա)». Գիտեմք նաեւ *զպատրոդայկերն* սատանայ եւ զսկզբնառոտիսն մեր միշտ պատրաստ եւ ջանացող առ ի խաբել եւ ի մեղս արկանել հնարիւք (ՇՀՆ, էջ 3):

Սասրկայրանջ, ամ. «սաստիկ տանջանքով եղած. տանջալից». Յաղագս որոյ՝ յիրաւի արժանի արասցէ զիս չարաչար մահուան եւ *սասրկայրանջ* սատակումն (ՇՀՆ, էջ 321):

Սկզբնառոտիս, ամ. (գոյ.) «առաջին ոտիս՝ թշնամի (չարագործ՝ սատանա)» (ՇՀՆ, էջ 3):

Սրեղծուածադորմ, ամ. «իր իսկ ստեղծածին՝ իր ծառային խնամող. Աստված» (ՇՀՆ, էջ 320):

Վիրառոջ, ամ. «վերքը առողջացնող՝ ողջ դարձնող». Եւ ընդ արտահեղիչ դեղոյն, զխոստովանութիւնն բանիւ եւ ընդ *վիրառոջ* սպեղանոյն, զապաշխարութիւնն գործով (ՇՀՆ, էջ 11):

Քաղցրագութ, ամ. «գթառատ, բարեգութ». Եւ հետեւեցայ մեղսապետին, եւ այսու բարկացուցի *զքաղցրագութ* եւ զանբարկանալի Հայրդ իմ (ՇՀՆ, էջ 283):

Քոյածին, ամ. «Տիրոջից ծնված, Տիրոջ ստեղծած». Արդ՝ ո՞վ Հոգի Աստուծոյ Աստուած ճշմարիտ եւ *ի քոյածին* մանկանց եմ մին՝ ես պարտաւորս (ՇՀՆ, էջ 327):

Քոյայրունկ, ամ. «Քո՝ Աստծոյ ստեղծած. մարդ արարած». Քանզի որ մինչ տակաին կայի ի տան եւ ի բնակութեան իմում *քոյայրունկ* (դրախտ) (ՇՀՆ, էջ 323):

Քոյայրուր, ամ. «Քո տված. Աստծոյ տված». Ի *քոյայրուր* բարեացն ամենից կողոպտեալ մեղօք վիրաւորեցեալ եւ կիսամահ անկեալ (ՇՀՆ, էջ 290):

գ. Բայական կազմություններ. *Խրաւրսպայրժել*, նր. «խրատել՝ պատժելով». Յորում իբրեւ վտանգեցաւ՝ նեղեցաւ եւ *խրաւրսպայրժեցաւ*, յայնժամ խնդրեաց (ՇՀՆ, էջ 7):

Կամնասայլել, նր. «կալսել. հունձքը կալում մշակել». Զորս պէս պէս շարահիսութեամբք՝ որպէս թէ *կամնասայլեալ* եւ աղացեալ արարի ալիւր (ՇՀՆ, էջ 12-13):

Համակապել, նր. «լրիվ կազմել, ամբողջացնել»։ *Համակապելալ* կազմեցի զգիրք մի եւ արկի յամենաբարեղի գանձարանն քո յԵկեղեցի սուրբ (ՇՀՆ, էջ 490)։

դ. Մակբայական կազմություններ. *Կարճատուրապէս*, մկր. «սեղմ հակիրճ, կարճառոտ ձեւով»։ Եւ աստէն հարկ է ինձ վերակրկնել կարճառոտապէս (ՇՀՆ, էջ 324)։ ՆՀԲ-ն եւ ԳԲ-ն չունեն, թեւեւ ունեն *կարճատուր*։ ԱԲ-ն չունի, ունի *կարճատուր, կարճատուրաբար*։

Ներողապէս, մկր. «ներողաբար. ներելի»։ Նախ՝ փոքրագոյն եւ անցաւոր եւ *ներողապէս*. այս՝ հատուցանի մեղաւորին ի Տեառնէ հանդերձ ողորմութեամբ ի յանցաւոր կեանս յայսմիկ (ՇՀՆ, էջ 5)։

Վերջաբար, մկր. «վերջապէս, ի վերջո. վերջում»։ Արդ աղաչեմք յիշել *վերջաբար* (ՇՀՆ, էջ 498)։

2. Բառի նոր իմաստային կիրառություններ։ Սրանք զգալի թիվ են կազմում, մանավանդ նոր ժամանակի գրաբարի՝ վաղ աշխարհաբարից ունեցած զգալի ազդեցության պայմաններում, եւ որոնց մանրամասն քննությունը, չի բացառվում՝ ավելին կարող է բացահայտել։

Անչափական, ած. «ոչ չափածո՝ արձակ, ոչ հանգավոր»։ Յորում բանք աղօթականք անոտանաւորք եւ *անչափականք՝* յօրինեցեալք աշխատասիրութեամբ ի նոյնոյ Յակոբայ արհի եպիսկոպոսի Շամալսեցոյ (ՇՀՆ, էջ 277)։ ՆՀԲ-ն, ԱԲ-ն ունեն «անչափ, որ չափ չունի» (քանակի) իմաստով, որն այլ է։

Գոհարան, գոյ. «գիրք»։ «Գիրք երկրորդ, որ կոչի *Գոհարան*» (վերնագիր. ՇՀՆ, էջ 348)։ ՆՀԲ-ն ունի այլ՝ «տեղի գոհութեան եւ շնորհակալութեան», «տաճար Աստուծոյ», «մատուցարան Սուրբ Հաղորդութեան», ԱԲ-ն՝ «գոհութեան եւ հաղորդութեան տեղ» իմաստներով, իսկ այստեղ «գիրք» է նշանակում։

Սրբագրել, նր. «(տպագիրը) մաքրագրել. սրբագրել»։ Արա՛, Տէ՛ր իմ, զի որք աշխատիցին ի սմա գրելով եւ *սրբագրելով* եւ կամ տպագրելով, եւ որք լինիցին պատճառք տպեցմանն ծախսոցն վճարմամբ, առցեն առատապէս ի յաննուագ գանձարանէդ զմեծ ողորմութիւնս՝ աստ եւ ի հանդերձելումն (ՇՀՆ, էջ 497)։ ՆՀԲ-ն, ԱԲ-ն եւ ԳԲ-ն ունեն *սրբագրիչ* «(ձեռագիրը) մաքուր գրող՝ ընդօրինակող», *սրբագիր* «սրբազան գրիչ. սուրբ գիրք», *սրբագրութիւն* «մաքուր արտագրութիւն» եւ այլն։

РЕЗЮМЕ

Представляемая статья посвящена изучению более шестидесяти слов, которые не имеются в больших толковых словарях древнеармянского языка. 1. Существительные: *բուսարերորին* “озеленение”, *դիմարարծրին* “понятливость”, *խրարարարծրին* “воспитание”, *համբերորդ* “великий проститель”, *մարմանեղորին* “озабоченность”, *լարար* “писец”, *նեղարարին* “беспокойство”, *որնաշարին* “поэзия”, *վարձարարին* “без возмездия”, *վերջարարին* “эпилог”, *փորարարարին* “старательность”. 2. Прилагательные: *ամենարար* “обильный”, *ամենարժարար* “исцелитель”, *անորարար* “проза”, *անորնաշարար* “непоэтическое”, *արարար* “мерзкий”, *արարար* “Бог”, *арарар* “божественный”, *арарар* “ядовитый”, *арарар* “сердечный”, *арарар* “позорный”, *арарар* “благодарный”, *арарар* “легковерный”, *арарар* “подобный раю”, *арарар* “признательный”, *арарар* “упоминающий Ерихова”, *арарар* “упоминающий Иерусалима”, *арарар* “яд”, *арарар* “армяно-григорианская (основа)”, *арарар* “содержательный”, *арарар* “Бог”, *арарар* “своевольный”, *арарар* “смертный”, *арарар* “духовный”, *арарар* “проститель”, *арарар* “злодей”, *арарар* “обидчивый”, *арарар* “благодарный”, *арарар* “галантливый”, *арарар* “поэтический”, *арарар* “детолюбивый”, *арарар* “карательный”, *арарар* “сатана”, *арарар* “злодей”, *арарар* “оздоровительный”, *арарар* “милосердный”, *арарар* “дар (богом)”. 3. Глаголы: *арарар* “воспитывать”, *арарар* “молотить”, *арарар* “сделать целостным”. 4. Наречия: *арарар* “сжато”, *арарар* “снисходительно”, *арарар* “наконец” и т. д.

SUMMARY

In the article more than 70 words are discussed which are not present in the voluminous dictionaries of old Armenian. 1. Nouns: *բուսարերորին* “vegetative state”, *դիմարարծրին* “comprehensible”, *խրարարարծրին* “punishment, reproof”, *համբերորդ* “great patient; Job”, *մարմանեղ*

դուքին “privation”, նախագրիչ “calligrapher”, նեղասկրոքին “trouble”, ուրնաչափութին “verse”, վարձագրկութին “deprival”, վերջաբանութին “epilogue”, փութասերութին “diligence”. 2. Adjectives: ամենաբարեւի “harvestable”, ամենաբժշկապետ “general practitioner”, անուրանաւոր “prosaic”, անուրնաչափական “prose”, սպականամերձ “distorted”, արարածասէր “God”, արարչաւիպելոյ “appropriate to God”, արմատաւոր “unfit”, բոլորասիր “sincere, devoted”, գլխակոր “with hanging head”, գոհաւրական “satisfactory”, դիւրաւաւելի “credulous, trustful”, դրախտասարսա “paradisiacal”, երախտաւելու “grateful”, երիքովասարսա “like Erichov”, երոսաւէմաւաւակ “like Jerusalem”, թոյնաւիպ “poisonous”, լուսաւորչաւիմն “founded by St. Gregory”, խորհրդածին “pithy, meaningful”, ծառայախնամ “God”, կամայագործ “willful”, հաւաճաշակ “mortal”, մարմնագործ “spiritual”, մեղսաթող “God”, մեղսապետ “villain”, նեղաւոր “pauper”, շնորհակալական “thankful”, շնորհաւիպ “gifted”, ուրնաչափական “verse”, որդեգրած “merciful to son”, պատժամարն “doomed to punishment”, պատրոդապետ “Satan”, սխալոր “erroneous”, սկզբնաւոր “Satan”, վիրաւոր “wounds recovering”, քաղցրագործ “merciful”, քոյաւոր “given by God”. 3. Verbs: խրատաւաւորել “preach by punishment”, կամնաւաւել “thresh”, համակաւել “make a whole”, սրբագրել “proofread”. 4. Adverbs: կարճաւորաւ “briefly”, ներողաւ “tolerantly”, վերջաւոր “finally” etc.

